չորցան: Ֆրանսացի մեր բարեկամները Թուրք հարեմները ապաստանեցան եւ հայ ժողովուրդը Թնդանօթի բռնեցին: Փաշաների տրըստը պայթեց: Մարկոս աղան կամացուկ պատերից քարտէսները վար առաւ, եւ որովհետեւ Ռուսաստանի հրդեհում Հայաստանն էլ այրւում էր, վազեց Բերլին, զանազան մութ «առեւտրական ներկայացուցիչների» հետ տեսնուելու:

Ահագին կարելիութիւններ...

«Հա՛յա տեսնենք, սա փոքրիկ երկիրը պիտի կրնա՞նք մարդ ընել»...

Բոլոր կարելիութիւնները փակ էին: Հաբէշստան վերադառնալ եւ նորից ջուրի տակառ մտնել անկարելի էր:

Մարկոս աղան վերջին խաղին ձեռնարկեց եւ բանկօն դրաւ Խորհրդային Հայաստանի վըրայ:

Նայեց հայելիի մէջ, մատը վեր բարձրացրեց եւ ճառեց:

Ինչպէ՞ս, Մարկոս աղան, տիպական եւ հաբէշական այդ բուրժուան բոլշեւիկների հետ միացե՞լ է, կոմունիզմի մասի՞ն է խօսում: Ի՞նչ կայ որ, գործը գործ է: Այնտեղ էլ խալի եւ ադամանդ կայ, դոլար, ստերլինգ...

Ահագին կարելիութիւններ...

* * *

Ուռած ռետինէ մեծ գնդակի վրայ ցըցուած, հաբէշական գլուխը, ճարպի վրայ երերուն, այսօր պտտում է Արարատի առջեւ եւ հաշիւ անում: Հաստ զիստերի վրայ կարճ տաբատ, կապոյտ գուլպաներ, սեւ երկայնածայր կօշիկներ եւ ծիրանագոյն գետրներ: Ցարդէ գլխարկ, գունաւոր ժիլետ եւ ոսկէ ժամացոյց: Թեւերը յետ նետած եւ փորը առաջ, քաղաքացի Մարկոս աղան ման է գալիս, անդադար խօսում, խորհուրդներ տալիս, բացատրում, լուսաբանում, պատգամներ կարդում:

Հայրական բարեսիրութեան տոն է առնում, սա երախաների հետ: Ներողամիտ է: Շատ էլ պէտք չէ պահանջել, նոր են, կը սովորեն: Երիտասարդ մոլեռանդների արհամարհական ելոյթները չտեսնել է ձեւացնում: Չեզոքների գանգատների վրայ պաղ ջուր է ածում, թէեւ սկզբունքով համաձայն է: «Գործը նայինք: Բօշ, բօշ բաներով չզբաղուինք»:

Մարկոս աղան որովհետեւ դպրոց չի տեսած, սաստիկ ատում է վարժապետներին, գըրողներին, արուեստագէտներին: Չի մարսում միտք սառուած բանը: Զրխակերներ են ու իր փառքի վրայ չուք են գցում:

Բրազիլիոյ կապիկների նման նախանձոտ է: «Վեց տող ոտանաւոր կը գրեն կոր ու համբաւ կ'առնեն: Աղբար, ա՛լ յոգնեցանք, սա մեր Փարիզի ձրիակեր «ազգային մեծ բանաստեղծներն» ալ բերէիք Համալսարան՝ աղէկ բան մը ըրած կ'ըլլայիք»: Համալսարան բառը արտասանում է արհամարհանքով, ուզում է ասել անկելանոց, անպէտք մարդկանց համար ապրելու միջոց: «Ազատեցէ՛ք, ազգը անոնց ձեռքէն կործանեցաւ. հիմա ալ մե՞նք պիտի կործանինք»:

Ասում է եւ աչքերը յառում արեւին:

Փարիզ բառը արտասանում է լեցուն բերանով: Այնտեղ ինքը ամէն ինչի տէրը ու տիրականն է: Փաշանե՞րը՝ ոչնչութիւններ: Բարեգործակա՞նը՝ շուտ վերադառնամ, սա կըտակների հարցը կարգադրեմ: Յոյսեր է արթնացնում: Խորամանկ է, գիտէ՝ ի՞նչ պէտք է ասել, ե՞րբ եւ ո՞ւր:

Երբեմն բարձր խորհում է:

«Սա կովկասահերը ի՞նչ միամիտ մարդիկ են... Ո՞վ լսած է, որ վանեցին վաճառական ըլլայ: Պոլսոյ մէջ վանեցին դռնապան էր, տուներու մէջ չնչին ծառայ, իսկ վաճառակա՞ն, ո՞վ լսած է: Հոս, վանեցիները առեւտրականի տեղ կ'անցնին կոր: Րոպէ մը խորհեցէք, եթէ Զմիւռնիայէն քանի մը խակական վաճառականներ գային, ի՞նչ պիտի ըլլար»:

Մարկոս աղան նախանձում է ե՛ւ վանեցի սպեկուլյանտներին:

«Սա մեր համայնավար գործիչները աղէկ մարդիկ են, խօսք չկայ, բա՛յց — բայց ասելու ժամանակ երկար շեշտում է, մատը վեր է բարձրացնում, եթէ սենեակի մէջ է նայում է հայելիին, եթէ դուրսն է, երկինքին — բայ՛այց գործ չգիտեն: Հարիւրին չորս հարիւր վաստակ կը խոստանան կոր, ո՞ւր տեսնուած է, ես ալ կը ստիպուիմ դաս մը տալ բոլշեւիկներուն: (Ստամոքսի մէջ ջուրերը շարժւում են՝ ծիծաղում է): Հարիւրին՝ չորս հարիւր... Եւրոպիոյ մէջ, բուրժուա երկրներու մէջ, հազիւ հարիւրին հարիւր կրնաս վաստկիլ, իսկ ասոնք...

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան